26. ԸՄԸՐԵ ՏԻՐԻԿՎԱՆ

Կէղնի, չէղնի մարդ մը, անուն Ըմբրե Տիրիկվան։

Հ՝ըմեն օր ըտրա կնիկ կվերու կուժ, կէրթա ջրի։ Էդ Ըմբրե Տիրիկվան կառնի ղնետ ու աղեղ, կէլնի կանի ցըվքի վրա, կնկան կբոռա, կասա.

— Կանի իսա նետ ու աղեղ ընցում, օր նոր իգաս, մտնիս ներս։

Կնիկ կկանի ուր տեղ, էտի կզանի ուր նետ աղեղ, կընցնի կժան կանթի միջով, կնկա ձեռաց մոտով, չառնի ձեռ։

Կասա.— Ինձմե կտրիճ էլ կա՞ աշխարքի հ՝երես։

Էտ կնիկ շատ կխեղճնա։

Մամ կիգա, կասա.— Լաո, տու ինչի՞ խեղճըցեր իս։

Կասա.— Ինչ զտար օր ես կէրթամ ջրի, իմ մարդ կզարկա, նետ ու աղեղ կժան կանթի միջով կընցու, կասա՝ «Ինձեն կտրիճ մարդ կա՞ աշխըրքի երես»։

Մամ կասա.— Լաո,— կասա,— անգամ լե օր զարկեց, հ՝ընցուց, դու կսիս ֆըլան սարի գլոխ մարդ մը կա, ուր անուն Խասմե Սուլեյման է, օր քեզնե կտրիճ էղնի՝ էն ա։

Օր մը լա կէրթա կնիկ ջրի, նետ ու աղեղ օր կզարկա մարդ, կընցու կանթի միջով կասա. «Ինձե կտրիճ կա՞»։

Կնիկ կասա.— Քըզնե կտրիճ Խասմե Սուլեյման ա։

Կասա.— Կնիկ, ես տի էրթամ ընտոր գլոխ բերիմ քըզի։

Կնիկ կըսա.— Ես լե պտի գամ։

Կնիկ օր կասա, կէլնեն մարդ կնիկ, ուր էրկու էրեխեն, տղե մը ու աղչիկ մը, կէլնեն կէրթան։

Խասմե Սուլեյման լե քառսուն ջան են, հ՝ըմնօր կէրթան կթալնին, կբերին, կուտին սարի գլուխ։ Էտոնք որ կէրթան, կմտնին ձիաներու թավլու վերին գլուխ, կպատըվտին։ Օր կպատըվտին, իրիկուն կէղնի, Խասմե Սուլեյման քառսուն մշակով կիգա։ Ըտոնք լե առած էկած են ահագին նախրներ, օչխըրներ։ Ծփ օր կբերին, կբերին տաս-տասվերկու հատ օչխար, կմորթին, կբերին ահագին թեղ մը փետ կվառին։ Ծփ օր կվառին, ամեն մեկ մեկ-մեկ շիշ քյապապ կիտան կրակին։ Օր կիտան կրակին, կնիկ կասա Ըմըրե Տիրիկվանին.— Պըտի էրթաս ընձի միս բերիս, ախըր գու շատ կտրիճ իս։

Մարդ կէլնի օր գա իտա տեխ, միս տանի, տղեն կիլա, կասա.—Օղապի, ասսու սիրում, մի էրթա,—կասա,—օր էրթաս, Խասմե Սուլեյման կիգա, ղմեղի կմորթա։

Կնիկ կասա.— Օր դու չէրթաս, ես կըռռամ։

Կնիկ կհազա։ Կնիկ օր կհազա, Խասմե Սուլեյման կասա մշկընեըում.

— Քելեք տեսեք, չգան ըռնին վըր մըզի։

Կէլնին, դուս կիգան, պեժ չկա։

Կնիկ մեկ լա կհազա։ Մեկլօր կհազա, կիգան ձիաներու տակ կիշքեն, չեն կրնա գտնա։

Ըմըրե Տիրիկվան կասա.— Կնիկ, ասսու սիրուն, ես էրեր իմ, դու մի էնա։ Ինչ գախ Խասմե Սուլեյման մըզի տեսնա, կմորթա։

Կըսա.— Քու միտ կիգա՞, օր ես կէրթինք ջրի, դու կառներ նետ ու աղեղ, կէլներ կանիր տանիք։ Օր դու կզարկեր կժան կանթի միշով կընցներ, ես կվախենեք, դու կըսեր՝ իմ պես կտրիճ մարդ չկա։ Կասա.—Քըզնե կտրիճ հանդե հ՝ոդա յա։

Իմալ օր կասա, մեկ լե կհազա, ·կիգան։

Կիգան կաշին, կգտնան զԸմըրե Տիրիկվան, ուր կնիկ, ուր էրկու ճիժ։ Կտանին Խասմե Սուլեյմանի մոտ։

Խասմե Սուլեյման կասա.— Դուք ի՞նչ մարդ էք, էկեր իք հ՝ոդա։

Մարդ կվերցու կասա.— Մենք ճամբխորդ ինք, մոլըրանք, էկանք իտա տեխ։

Կնիկ կասա.— Էսի Ըմըրե Տիրիկվան ի, ես օր կէրթինք ջրի, էտի կէլներ, կկաներ տանիք, նետ ու անեղով կզաներ կժան կանթի միշով իմ ձեռաց կընցներ ու ընձի կըսեր, թե՝ իմ պես կտրիճ չկա։ Ես լե կըսենք. «Խասմե Սուլեյման քեզ պես կտրիճ ա»։

Կըսա.— Բերեք ըտրան չվնով կապինք սռնովի։

Կհարցու կնկան.— Դու վի՞ր կնիկն իս։

Կնիկ կասա.— Ես Խասմե Սուլեյմանի կնիկն եմ, էլ Ըմըրե Տիրիկվանի կնիկ չեմ։

Ախչկան լե կհարցու.— Դու վի՞ր ախչիկն իս։

Կասա.— Ես Խասմե Սուլեյմանի ախչիկն իմ, էլ Ըմբրե Տիրիկվանի ախչիկ չիմ։

Տղից լե կհարցու, կասա.— Տղա, դու վի՞ր տղեն իս։

Կասա.— Ես Ըմբրե Տիրիկվանի տղեն իմ։

Ուր հոր թարկ չի տա, չը ուրանա զուր հեր։ Ախչիկ ուրացավ զուր հեր, կնիկ լե ուրացավ զուր էրիկ։

Բերին Ըմբրե Տիրիկվան չվնով կապին սունուվի։ Խասմե Սուլեյմանի մըշկներ կերան ուրանց քյապապ, էլան քնան։

Խասմե Սուլեյման էտ մշկներ բաժնեց՝ հ՝ամեն հ՝օդեն տաս-տաս, քնան։ Գրկեց Ըմբրե Տիրիկվանի կնիկ Խասմե Սուլեյման, քնավ։ Ախչիկ լե պառկավ Խասմե Սուլեյմանի կուշտ, քնավ, տղեն մնաց պապու մոտ կանուկ։

Տղեն ըսավ պապուն.— Իմա՞լ էնիմ քըզի արցըկիմ։

Կասա.— Լաո, դնա Խասմե Սուլեյմանի թուր քաշե գլխու տկեն, բեր։

Տղեն կասա.— Քաշիմ բերիմ թուր, չիմ կանա տկլոզցու։

Կասա.— Լաո, քաշա բիր, դիր իմ հ՝օտներու տակը։

Կքաշա բերա, կդնա պապու օտներու տակ։

Պապ կասա.— Ես կկանիմ վրեն, դու էրկու ձեռով քաշա։ Քաշա,— կասա,— ճուղ մը էտա չվան կտրա։

Տղեն կքաշա, թուր կտկլոզցու, գըռսա, գըռսա, ճուղ մը չվնից կկտրա։ Ճուղ մը չվնից օր կկտրա, Ըմբրե Տիրիկվան կարցկվի։ Կէրթա, կվերցու Խասմե Սուլեյմանի թուր, կէրթա հ՝օդե մը, տաս մշակ կմորթա։ Մորթա՝ կիգա կփաթթըվի սունուվի, կկանի։ Խասմե Սուլեյման քնուց կհ՝իմնա։ Օր կհ՝իմնա, կնկան լե կհ՝իմցու։

Կնկան կասա.— Կնիկ, մեչ էրղին տեսա քառսուն հատ էղվընեկ տաս-տաս դրած ին, հանկարծ տեսա ցուրուր մը հ՝իջավ, տասը հատ էղվընեկու գլուխ կտրեց։

Կնիկ կասա.— Աստված խերն էնա, վատ էրազ ա։

Մեկ լա կքնի։ Էտ Ըմբրե Տիրիկվան կարցըկե ուր չվան, կէրթա տասը հատ մշակ կմորթա ու կիգա, կփաթթըվի սունուվի, կկանի։

Օր կանավ, Խասմե Սուլեյման էմլա կիմնա, կիմցու կնկան, կասա.— Տուր էրազ։

Կասա.— Էրղի մեչ տեսա ցուրուր էլմա էկավ, տասը հատ կերավ էղվընեկուց, էղավ քսան հատ։

Կասա.— Խասմե՝ Սուլեյման, շատ վատ էրազ ա, աստված բարին կատարա։

Կքնին։ Տղեն էմալ կանուկ է ուր հոր էրեսնուվի։ Ըմբրե Տիրիկվան կէրթա տաս լե կմորթա, կէղի եռսուն։

Խասմե Սուլեյման կիմնա, կնկան կիմցու, կասա.— Տեսա օր ցուրուր էդ էղվընեկներու հեխուն բերաց։

Կնիկ կասա.— Դու էտ ղտար կտրիճ իս, չըս կրնա՞ զարկե ղցուրուր ըսպանե։

Կասա.— Իմ թուր կվերցում, դարդակ կալան ա, շըլֆ մեչ չէ. օր կտրա զէդ ցուրուր։

Էտ անգամին էլմա կքնին։ Ըմբրե Տիրիկվան կիգա, էլմա տաս մշակ կմորթա, կէրթա կփաթթըվի սունուվի, կկանի։

Խասմե Սուլեյման էլմա կիմցու զուր կնիկ, զէրազ կպատմա։ Կասա.

— Կնիկ, էլմա մեչ էրգիս տեսա ցուրուր էկավ, տասը հատ էղվըներ կերավ, պըտի ուտեր զբըրթան լա։

Կնիկ կասա.— Աստված խերն էնա։ Էղվընիկներու ուտող պըտի զբըրթան լե ուտա։

Էմլա կքնին։ Ըմբրե Տիրիկվան կհարձրկվի, կնստի։ Կբերին ինքն ու ուր տղեն էտ քյապապներ օր կերած ին, հ՝ավելցած ի, կբերին կուտին։ Օր կերան թըմման, կիմցու Խասմե Սուլեյման, կասա.— Խասմե Սուլեյման, էլի իրարու հիտ կռիվ էնինք։ Նոր բարիբրանք հ՝իրարու։

Խասմե Սուլեյման կասա ուր մտքի մեչ. «Ես Ըմբրե Տիրիկվանի հետ չըմ կրնա կռիվ էնա, ես ելնիմ կռիվ էնիմ, իմ ձին կռվու պես կխրխնջա, մըշկներ քնուկ տեղեն կիմնան, կէլնին էդ մարդուն կզարկին, կսպանին»։

Կէլնին կռիվ կէնին, ձին կխրխնջա, կասա.— Խասմե Սուլեյման, ինչ օր քու մտքի մեչ էր, մոռցի։ Գնաց քու ձեռքեն։ Կասա.—Դու օր էրգի մեչ կտեսներ օր ցուրուր կիգեր, կուտեր տաս-տաս հատ էղվըներ, չէ՞ էտի Ըմբրե Տիրիկվան էր, կկտրեր ուր չվան, ամեն գամ կէրթեր, տաս մշակ կմորթեր։ Դու լե կիմներ, քու կնկան կպատմեր, թե ցուրուր հրմլա կիգեր, էղվընեկներ կուտեր։ Հ՝ետին անգամին օր տեսար, էկավ, մորթեց քառասուն էղվըներ, թըմըմավ, էկավ զբըրթան լե պըտի մորթեր,— կասա,— էնի Ըմբրե Տիրիկվան էր, օր մորթեց քու մշկըներ, քեղի լե պըտի մորթե։

Խասմե Սուլեյման կզարկա ուր նետ ու անեղ, Ըմբրե Տիրիկվանին չբըռնա, Ըմբրե Տիրիկվան կզարկա Խասմե Սուլեյմանին, կպատու, կհասնի վիզ կկտրա։

Ըմբրե Տիրիկվանի կնիկ կտեսնա, օր Ըմբրե Տիրիկվան Խասմե Սուլեյմանին ըսպանեց, շուտ մը կհասնի, Ըմբրե Տիրիկվանի համար ձեռք մը շոր կկտրա։ Ըմբրե Տիրիկվան օր դուռ կբանա, կնիկ կասա.—Դե, էլի էրթանք։

Ախչիկ լե կասա.—Պապո, շուտ էրա առնինք իմ մամ, էրթանք, մեր տուն բառատի ա։

Ըմբրե Տիրիկվան կասա.— Օր ես կապուկ ի, հ՝որի՞ ընձի չէր ըսի՝ պապո։ Ընձի ուրացեր էր, դու Խասմե Սուլեյմանին կըսեր՝ զիմ պապ դու իս։

Կբերա զախչիկ կմորթա, կնկան կասա.— Կնիկ, տե ել էրթանք։

Կնիկ շուտ կէլնի, օր էրթան, Ըմբրե Տիրիկվան կասա.— Օր ես Կասեի թավլի գլուխ՝ ես ըրի, դու մ՝ենե, ընչի՞ դու հազացիր, օր էկան, մըղի գտան։ Քու սիրտ պաղեր էր, օր ընծի թողիր գացիր, առար Խասմե Սուլեյման։

Կբերա էս կնիկ լե կմորթա, կառնի ուր տղեն ու կէրթան։

Շատ ու քիչ ճամբախ կէրթան, գիշեր կիտա վըր ուրանց, տղեն ու պապ կմնան հ՝ոդի։

Չէ՞, պապ չքըներ ա, տղին կասա.—Դու քնի։

Չղըմըշա ըսե. «Փշուր մը դու մացի հ՝իմաց, ես քնիմ»։ Տղեն օր կքնի, պապ փշուր մը կմնա հ՝իմաց, պապ լա կքնի։ Ջանավար մը կիգա, գէտ տղեն կվերցու, կտանի։ Օր կտանի, պապ լուսուն կիմնա, կտեսնի օր տղեն դիտա չէ, գիլա ու կօլորտի էտ սարեր։ Կիգա կտեսնա՝ ձիու մը ջանդակ հանդե հ՝ոդի ա։ Ըտի կնստի էտ փիծուկ ջանդրկի հետ։ Կտեսնի օր մենձ խըրտալ մի էկավ, միս կուտա։ Ջառի կանա խարտալ, կասա.

— Քու աստված օր կսիրիս, սար ու ձոր կօլորտիս, իմ տղես սալըղ մը ինձի տաս։

Կէրթա խարտալ, կօլորտի սարեր, կտեսնի օր կաղնի բլի տակ տղե մը հանդե պառկուկ է ըստեխ։ Գելըմ կէրթա, օրեն մաքու մը ջանդակ կբերա ըտոր, օր ուտա, տղեն անոթի չմեռնի։ Տղեն զօխչրի կես կերե, կես մացե հ՝ոդի։ Էտ խարտալ կանոթնա, կնստի էտ ջանդրկի վրեն, կուտա։ Կուշտ կուտա, կէրթա։ Կմոռնա օր էրթա Ըմբրե Տիրիկվանին սալըղ էնա։ Կէրթա խարտալ, կուշտ կերերէ, յոթն օր պառկի կքնի։

Ըմբրե Տիրիկվան լե գինա՝ խարտալ գուցե ուր տղեն կշարա։

Խարտալ մըչ էրծին կտեսնա, օր Ըմբրե Տիրիկվան կիգա, ուրեն կասա, թե. «Դու գացիր, օր ընձի համար անկճկըլա բերեր, ինչի՞ հ՝անգրցար, չբերեցիր»։

Կասա.— Օհո, ես գացեր եմ, ջանդակ կերեր եմ, մոռցեր եմ՝ էրթամ, պապուն ասեմ։ Կասա.— Կանի էրթամ տեսնիմ տղեն ընտեխն ա, օր էրթամ, պապուն խապար տամ։

Գել կիգա, կտեսնա օր ջանդակ ուտուկ ա, կասա.— Աստվաց էրեց, իտա ջանդակ հ՝ոդա էր, ջանդակ չէղներ, պըտի զտղեն ուտեր։ Կվերու զտղեն կտանա սարի գլուխ, կդնա ուռի մը ծառի տակ, օր առչ չիդա, ուտա։ Կէրթա կբերա ջանդակ մը, կդնա տղու մոտ։ Տղեն կելի, կէփա, կուշտ կուտա, կպառկի քնի։ Էտ խարտալ կիգա ուր հ՝առջի տեխ կօլոր-

տի, չգտնա զտղեն, օր սալըղ էնե Ըմբրե Տիրիկվանին։ Կէրթա Ըմբրե Տիրիկվանի մոտ խարտալ, կասա.

— Ըմբրե Տիրիկվանի, քեզմե պահիմ, Աստծուց իմա՞լ պահիմ, ես հարի հասա քու տղի մոտ, ջանդակ մը կար քու տղի մոտ, կես կերուկ էր, կես անկերուկ էր։ Ես լե մոռցա, ջանդակ կուշտ կերա, էկա իտա յոթն օր քնուկ եմ, հ՝էսօր մըշ էրազին տու էկար, ըսեցիր. «Ասսու սիրուն, ի՞նչ էղավ, օր դու ընձի սալըղ մը չէնիս», ես նոր էլա, գացի քու տղի տեխ, օր ես ջանդակ կերա, գաշեցի, գաշեցի քու տղեն չգտա։

Մեկ լե զարե կանա Ըմբրե Տիրիկվան. միս կուտա, ջուր կխմա, օր էս գախ մտքեն չէրթա։ Կէրթա տղի գլխուն կկանի, կասա.—Տղա, օր գել քըզի օչխար կրերա, դու հարցու ուրնե, ըսա. «Օչխար կմոտենա իտա սարին, յա չի մոտենա»։ Օր ասեց՝ օչխար կմոտենա, դու ելի, գնա, բալքիմ հասնիս հովվին, հովիվ քըզի աղատա։

Էտ վախտ կտեսնա, օր գել ընտեն առեր ջանդակ, կիգա։ Խարտալ կպատըվտի թփերու մեչ։ Գել կիգա ջանդակ կգնա տղի մոտ, տղեն կհարցու, կասա.

— Աստծու սիրուն էղնի, էտ օչխար հ՝որի՞ կթողուս մոտենա ընծի։

Կասա.— Քու տունն ավերի, օչխար ավուր մը ճամբախ հեռի ա քեզնե։

Իմալ օր կասա, խարտալ կթռնա, կէրթա պապուն կասա.—Քու տղու սալըղ էրեր եմ։

Կասա.— Իմա՞լ ես էրե։

Կասա.— Կէլնիս էրթաս Ցրիմա քաղքի հովվի մոտ, էնի սալըղ կէնե քու տղեն։

Կտառնա կիգա, կասա տղուն.— Շուտ ելի, օր հասնիս օչխըրին, օչխար չդառնա, դու մնաս սարի գլուխ էմլա։ Օր չհասնիս, գել կիգա, կտեսնա օր դու ուր դրած տեղեն հեռացիր ես, կիգա քըզի կուտա։

Տղեն շուտ կէլնի, կվազե դրբա օչխար։

Օր կէրթա օչխար, գել էնօր շուտ գըյնի ջանդակ ուր ձեռ, կիգա։ Կիգա ուռի ծառի տակ, կիշկա օր տղեն հ՝ոդի չէ, կէլնի գըյնի տղի ետև։ Կգաշա տղեն կմոտենա օչխըրին, գել լա կմոտենա տղին։ Գել չտեսնա զտղեն, կբոռա, օր տեսնենք տղեն որ մեկ տեխեն ձեն կիտա ուրեն։ Տղեն կբոռա հովվին, կասա.— Ի սեր աստծու, արի, գել կերավ զիս։

Ըտմալ օր կասա, հովիվ տարձրեր էր զուր օչխար, կիգեր գեղնուվի, ձենն օր կհասկնա զէրկու շուն կառնի կիգա տղենուվի։ Ըտ տեղեն հարի կմոտենա, գել շուտ կհասնի օր տղեն բռնա։ Հովիվ շուտ շներ կթողա։ Կթողա կհասնին, զգել կբռնեն։ Գել օր բռնեցին, տղեն աղատավ։ Հովիվ առավ տղեն, էկավ Ցրիմա քաղաք։

Տղու պապ լե էկավ, մոտեցավ Ցրիմա քաղքին, գաշեց հովվին,

չգտավ զՀովիվ։ Եփ օր չգտավ, կուղեր հարցնելով սալըզ էներ, Հ՝ուրվի հարցուց, չկրցավ սալըզ էներ, էլավ սարի գլուխ, նստավ։ Տեսավ օր հովիվ մը էկավ, տղն մը ուր հեա։ Էկավ աղեն ճանչցավ զուր պապ, հովվին լավս ընգավ, ըսեց.— Էտ իմ պապն է, թող ես էրթամ հասնիմ իմ պապուն։

Կասա.— Օր քու պապն է, ես քըզի գիլուց իմ ազատեր իմ, եփ օր քու պապ ըներեց տվնց քու արունք, կիտամ։

Է՞հ, Ըմբրե Տիրիկվան ա, փարա՞ կա ուր մոտ։

Հովվին կասա, թե.— Ուզա, տամ։

Հովիվ լն կվերցու կասա.— Քեզնե կուզիմ էրկու ջորաբեռ փարա։

Ըմբրե Տիրիկվան կասա ուր մտքի մեչ. «Շատ ուզա հ՝իսուն օսկի, վաթսուն օսկի, իմ մոտ կա, կիտամ, կտանիմ զիմ տղեն»։

Էհ, էտմալ օր կհասկնա հովվից, չկըրնա տղեն առնի, կթողա, կէղնի ժամկոչ էտ Ցրիմա քաղաք։ Տղեն կմնա հովվի մոտ։

Ըմբրե Տիրիկվան հ՝մեն օր աղոթք կանա, ղաստված կկանչա, կկանչա, օր հովվի աչքեր քոռնա։

Օր մը օրերուց կհասկնա, օր հովվի աչքեր քոռցեր ա։ Կէլնի ժամկոչութենեն կէրթա։ Կէլնի սալըզ կենա բրտուց, կէրթա բրտի մոտ, կէրթա հ՝իսուն օսկի կիտա, կառնի աման, կառնի չաքուչ մը, կէրթա։ Կնստի էդ ամներ կջարգա։ Կջարդա, կլըլա մսղաղե մը։ Կբերա, քառսուն բեռ, էդ ջարդած ամներ կբռնա, կբերա քառսուն դևա կբառնա, կէրթա Ցրիմա քաղքին կմոտենա։ Դեմ կքշա հովվի դուռ կկանի։ Հովիվ քոռցե, նստե տուն։ Կկանչա զՀովիվ, կհանա դուրս։

Կասա.— Հովիվ, հանդա քու քառսուն բեռ օսկին, իմ տղեն տուր, տանիմ։

Հովիվ կիշքա քառսուն դևա բառցուկ, կանուկ հ՝ոդա, կասա.

— Հարի ես էս քառսուն բեռ օսկին ուտիմ, կմեռնիմ, էլ ինչ էնիմ զտղեն, թըզ տանի։

Կբերե բեռներ կդարդրկե հ՝ոդի, դևաչուց քրեհ կիտա, կասա.— Դեհ, դուք տառցեք, գացեք։

Կառնի զուր տղեն, կիգա։

Տղեն կառնի կիգա, կմոտենա ուրենց ավահենցներուն։ Էրկու օր, իրեք օր կմնան ուրանց ավաճիք, էս անգամին տղեն մամու քրպուն կծռի։ Կէլնի օր տանի սրբեր՝ աղեկնա։

Կասա.— Վալլահ, չըմ տանի զիմ տղեն, պզտիկ-պզտիկ տանիմ հնգցում սրբեր, ընկնի խալխի բերան։

Կէրթա թուղթբացի մը մոտ, կասա.— Ի՞նչ էնիմ, օր էտ իմ տղեն սաղնա։

Թուղթ բացող կամա.— Գոլ մը կա հ՚ոդա, ձեր գեղի մոտ,— կասա,— էտ գոլի մեչ ձուկ մը կա, եփ օր ձուկ բռնեցիր, էփեցիր, քու տղեն կերրավ՝ կսաղնա։

Կէրթա էտ մարթ, կտեսնա, օր օձ կա ըդ գոլի բոլոր, չի իշխնա մտնի մեչ։

Կասա. «Ինչ էնիմ, օր էս օձեր հեռենան գոլի բոլորից»։ Կբերա միս, շոռ միս, կուտա՝ կուտին, կբերա գինի, կուտա՝ կխմին։ Օր կխմին, օձեր կսարխոշնան, կվաղեն սարն ու վիր։ Կթալա թոռ, մանդռ ձկներ կէլնին, էն ձուկ ըխտիարցեր է, ընկե ծովու տակ, չի կառնա ելնի։

Կասա.— Ի՞նչ էնիմ, օր էտի էլնի։

Պզտիկ ձուկ մը կասա.— Թոռչի ցախուբ կա, էն թոռչի ցախուբ օր զա, էնի կրնա հանե զէտ ձուկ։

Թոռչի ցախուրն ա, էտ օր գացած ա սար, քեֆ կէնին։ Կէրթա, տնեն կհարցու, կըսին.— Տեռ չի էկիր ա, ու հալ պու տըր, օր ցախուբ դացե, մացե սար։

— Է, ի՞նչ էնինք, ի՞նչ չէնինք, օր ցախուբ գտնանք։

Ըմբրե Տիրիկվան սապախտան կէլնի, կըյնի սարեր, օր ցախուբ գտնա, գա թոռ թալա։ Գաշա սարեր ու ձորեր, հ՚ուրվի կօլորտա, սալըղ մը չըկըրնա էնա։ Կէրթա օր մարթ մը փախուկ, էլուկ ծառի մը ծեր։ Կիշկա օր ծառի բոլոր պեժ կիգա։

Կասա.— Ջանըմ, իտա առջ էղնի կերևեր։

Կիշկա օր ահագին օձ մ՚ ա, կուզե, օր ուր պոչ փաթթե ծառին, քաշա ծառ, կոտրա, ըդ մարդ կուզա հասնի, օձու գլուխ չընչխա։ Ըմբրե Տիրիկվան կզարկա, օձու գլուխ կկտրա, օձ կսպանի ըտեզ։ Մարդ կիչու, կտեսնա, օր էտի ցախուրն ա։

Կըսա.—Ըմբրե Տիրիկվան, ի՞նչ իտամ քըզի, օր զիս աղատեցիր իտա գազանից։

Կասա.— Բան չըմ ուզի քըզնե, իգաս ձեր գեղի մեչ գոլ մի կա, ձուկ մը կա ուր մեչ, գաս թոռ թալիս, հանիս։ Իմ տղեն ծռեր ա, ուտա, բալքի խելքի գա, ազատի։

Կըսա.—Վալլահ, ըտի ըռհատ ա։

Կիգան, օր զթոռ բերեն, թալեն։ Թոռ կթալա, զձուկ կհանա։

Կբերա, տղեն կուտա, տղեն կսաղնա, Ըմբրե Տիրիկվան կէրթա, օր ուրեն համար կնիկ բերա։

Կէրթա կնկա մը մոտ, բարև կիտա, բարև կառնի, կասա.—Կնիկ, ընձի չես առնի՞։

Կասա.— Իմ սրտի մըչ մարամ մը կա, օր կատարեցիր, կառնիմ։

Կասա.— Ըզքու մարամ ըսա, տեսնամ։

Կասա.— Իմ մարամ էն ա, օր դու էրթաս իտա սարի գլոխ, իշքես՝ իմ էրիկ խոտ ա քաղե առաջի տարին, օր ես կարգվեր եմ, ու չէ էկե տուն էլ։

Ըմբրե Տիրիկվան կիյնի կէրթա էտ սարի գլոխ։ Կիշքա օր մարդու գերընդին, դար ու դազկեն ընտեխն ա, ինքը չկա։ Տյուտուրմիշ կէղնի, կմնա էտմալ, քուն կտանի, կքնի։

Հ՝ուշափ մը կա էտ քարի տակ մտուկ, կէնե օր ըտրան ուտա, Ըմբրե Տիրիկվան ձին կհոհրոա, ձեն կպատի ուր անկաճ, կհ՝իմնա, կտեսնա, օր հ՝ուշափ կուղե ուրան կըլու։ Շուտ կիմնա, չըկլու, կէլնի, կզարկե. ղհ՝ուշփու գլոխ կկտրա։ Էտ հ՝ուշփու գլոխ թաք կոտոշ մը կա, կառնե ղէտ կոտոշ ու կիգա, ցուց կիտա կնկան, կասա.— Քու մարդու գլոխ իտա հ՝ուշափն ա կերե։

Կասա.— Օր էտա հ՝ուշափն ա կերե, դու իմ մարդու հալիֆ առար, ես քըղի կառնիմ։

Խոսք կիտան հ՝իրարու, կառնեն զիրար, կիգան կպսակվին։

Էնոնք հասան ուրանց մուրազին, դու լե հասնիս քու մուրազին։

Իրեք խնձոր հ՝իջավ էրկնուց, մեկն՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկ լե՝ ալամ աշխարքին։